# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2023 թվականի N 526-Ա**

**2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-14-Ը ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԱՆՑԱԾ, ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ ԿՈՐՈՒՍՏ ՈՒՆԵՑԱԾ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿՉԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետի 22.12.2023թ. զեկուցագիրը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. 2022 թվականի սեպտեմբերի 12-14-ը Ադրբեջանի ագրեսիայի ժամանակ հակառակորդի տիրապետության տակ անցած, պտղատու այգու կորուստ ունեցած, Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի բնակչին Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 2200-Ն որոշման 01 բաժնի 08 խմբի 01 դասի 10՝ «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների համար» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 2 734 000 (երկու միլիոն յոթ հարյուր երեսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ՝ 2 734 000 (երկու միլիոն յոթ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ գումարի վճարումը հավելվածում նշված քաղաքացուն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 25
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290